ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99 2 82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

## *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

24-ը մայիսի 2022 թվականի N 69 Ա

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի, 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

1.Հաստատել 24-ը մայիսի 2022թ. թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրային հայտերի քննարկման մասին:

3.Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

4.Եղեգիս համայնքի Հերմոն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,26784հա և 0,56208հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքերը աճուրդային կարգով օտարելու մասին,

5.Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 2/երկու/ հա արոտ հողատեսքը վարձակալությամբ տրամադրելու մասին,

6. Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,49196 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը աճուրդային կարգով օտարելու մասին:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
24-ը մայիսի 2022 թվականի N 70 Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 42-րդ կետերի պահանջներով, ***ավագանին որոշում է՝***

Նկատի ունենալով Եղեգիս համայնքի զարգացման համար Եղեգիս համայնքի ավագանու 27/01/2022թ. թիվ13Ա որոշմամբ հաստատված ծրագրերի հրատապությունը, հաշվի առնելով, որ օբյեկտիվ հանգամանքներից ելնելով /եղանակային պայմաններ, հայտարարված մրցույթների մասնակիցների բացակայություն/ Եղեգիսի համայնքապետարանի կողմից պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով զարգացման ծրագրերին մասնակցելու վերաբերյալ ներկայացվող հայտերը ժամանակին չի ներկայացվել մարզպետարան, առաջարկել համայնքի ղեկավարին սեղմ ժամկետում սույն որոշման հետ համատեղ մարզպետարան ներկայացնել սուբվենցիայի ստացման ծրագրային հայտերը:

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղալյան Նվեր կողմ

Գևորգյան Արման կողմ

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա կողմ

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

***Ո Ր Ո Շ ՈՒ Մ***

24-ը մայիսի 2022 թվականի N 71 Ա

## ***ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂՆՋԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» թիվ 987-Ն որոշման 1-ին մասի 9-րդ կետը և հաշվի առնելով Եղեգիս համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***ավագանին որոշում է՝***

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Աղնջաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Արման Սամսոնի Հովհաննիսյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքը /0,1538հա մակերեսով, 10-007-0155-0009 կադաստրային ծածկագրով/ փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման /բնակելի տուն կառուցելու համար/:

2. Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բադալյան Նվեր բադալյան

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24-ը մայիսի 2022 թվականի N 72 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,26784 ՀԱ ԵՎ 0,56208ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Հերմոն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողամասերը /կադաստրային ծածկագիր՝ 10-029-0116-0032, մակերեսը՝ 0,56208հա և կադաստրային ծածկագիր՝ 10-029-0120-0014, մակերեսը՝ 0,26784հա/ աճուրդով օտարելու մասին:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 150%-ի չափով:

3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 1

Բադալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 1

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

# *Ո Ր Ո Շ Ու Մ*

24-ը մայիսի 2022 թվականի N 73 Ա

## *ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԵՐԵՔ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 28-ը հոկտեմբերի 2010 թվականի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N1477-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***ավագանին որոշում է՝***

1.Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրի «Ծաղկահովիտ» կոչվող հանդամասում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 2 /երկու/ հա մակերեսով արոտավայր հողատեսքը երեք տարի ժամկետով վարձակալությամբ օգտագործման տրամադրել Աղնջաձոր բնակավայրի բնակիչ Ռուբիկ Ռաֆայելի Հովհաննիսյանին:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ կնքել արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու պայմանագրեր, վճարի չափը սահմանելով տվյալ արոտավայրի կամ խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝0

Բադալյան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Կողմ՝ 6 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ shatin.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24-ը մայիսի 2022 թվականի N 74 Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԱԳԼՈՒԽ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,49196ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***ավագանին որոշում է՝***

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-044-0227-0043, մակերեսը՝ 0,49196հա/ աճուրդով օտարելու մասին:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 150%-ի չափով:

3. Տալ հայտարարություն Հայաստանի Հանրապետություն օրաթերթում:

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Բաղդայան Նվեր

Գևորգյան Արման

Հարությունյան Աշոտ

Հովհաննիսյան Ռուբիկ

Մարկոսյան Ռազմիկ

Մարտիրոսյան Զոյա

Մարտիրոսյան Նորայր

Մելիքսեթյան Վարդան

Կողմ՝ 7 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

Մելքոնյան Արմենակ

Վարդանյան Մխիթար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ